

Տ. ՋԱՎԵՆ ԱԲԵՂԱ ՀԱԿՈԲՅԱՆ
(ավազանի անունը՝ Արման)

Ծնվել է 1977 թ. մայիսի 12-ին, Էջմիածին քաղաքում:

1984-1992 թթ. սովորել է Էջմիածնի Հովհաննես Հովհաննիսյանի անվան № 3 միջնակարգ դպրոցում:

1989 թվականից ծառայել է Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցում:

1992-1994 թթ. ուսանել է Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանում:

1995 թ. ընդունվել է Գևորգյան Հոգևոր Ճեմարան և 2000 թ. ավարտել այն:

2000-2001 թթ. մասնակցել է Ամերիկյան համալսարանում կազմակերպված մենեջմենտի դասընթացներին:

2001թվականից սովորում է ԵՊՀ-ի Իրավաբանական ֆակուլտետում:

2000-2004 թթ. աշխատել է Կաթողիկոսարանում որպես գործավար-քարտուղար:

2002 թ. դեկտեմբերի 24-ին՝ Ս. Ստեփաննոս նախավկայի տոնին, ձեռամբ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, ձեռնադրվել է սարկավագ:

2003 թ. ապրիլին պաշտպանել է ավարտաճառ՝ «Տ. Գյուտ ավագ քահանա Աղանյանց. կյանքը, հոգևոր-հասարակական գործունեությունը, գիտագրական ժառանգությունը» թեմայով:

2004 թ. ապրիլից նշանակվել է աշխատանքի Մայր Աթոռի Ճարտարապետա-շինարարական բաժնում՝:

2004 թ. մայիսի 2-ին, ձեռամբ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: